**ԱՆՀԱՊԱՂ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ**
Զիզեթ Մուլինզ (Zizette Mullins), MMC
Քաղաքի Գործավար
(818) 238-5851
zmullins@burbankca.gov

# ԲԸՐԲԵՆՔ ՔԱՂԱՔԻ 2020 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-Ի ՔԱՂԱՔԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳՎՈՒՄ Է

**ԲԸՐԲԵՆՔ, ԿԱԼԻՖՈՐՆԻԱ (Օգոստոսի 7, 2020)** – Բըրբենք քաղաքի (Քաղաք) 2020 թ. նոյեմբերի 3-ի Քաղաքային ընդհանուր ընտրություններին թեկնածությունների առաջադրման ժամկետը, որը մեկնարկել էր 2020 թ. հուլիսի 13-ին ու ավարտվել 2020 թ. օգոստոսի 7-ին, Քաղաքային խորհրդում լիարժեք, պաշտոնավարման քառամյա ժամկետը 2024 թ. դեկտեմբերի 16-ին լրացող (2) տեղի, ինչպես նաև Քաղաքի Գանձապահի մեկ (1) տեղի համար, որի պաշտոնավարման ընթացիկ ժամկետը լրանում է 2022 թ. դեկտեմբերի 19-ին, երկարաձգվել է մինչև **չորեքշաբթի, 2020 թ. օգոստոսի 12-ը, ժամը 17:00-ը,** ըստ Կալիֆորնիայի Ընտրական օրենսգրքի Բաժին 10225-ի, որի ներքո, եթե Քաղաքի ներկայիս պաշտոնավարող անձի թեկնածության առաջադրման թղթերը չեն ներկայացվում մինչև ընտրության օրին նախորդող 88-րդ օրը, ներառյալ այդ օրվա սովորական հայտարարված աշխատանքային ժամերի վերջը, ապա ընտրողներին ժամանակ է տրվում մինչև ընտրության օրին նախորդող 83-րդ օրվա հայտարարված աշխատանքային ժամերի վերջը՝ ներկայացնելու մեկ այլ թեկնածություն, քան այն պաշտոնատար անձի թեկնածությունը, որն 88-րդ օրը զբաղեցնում էր տվյալ ընտրովի պաշտոնը: Պաշտոնատար անձը, որը չի ներկայացրել իր թեկնածության առաջադրման թղթերը, հետևյալն է.

**Քաղաքային խորհուրդ** – Խորհրդի անդամ Էմիլի Գեբլ-Լադի (Emily Gabel-Luddy)

Հավելյալ տեղեկատվության համար խնդրում ենք դիմել Քաղաքի Գործավարի գրասենյակ՝
հետևյալ հասցեով. City Hall, 275 East Olive Ave., Burbank, CA 91502
818-238-5851, կամ cityclerks@burbankca.gov

Burbankvotes @Burbankclerk www.burbankca.gov